ՊՈԼԻՏԻՑԻԴԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մելինե Անումյան

Պոլիտիցիդ կամ քաղաքական սպանություն՝ եզրով է ցեղասպանագիտության մեջ սահմանվում ցեղասպանության զոհ հանդիսացող ազգի կամ ժողովրդի քաղաքական, հասարակական, ռազմական և մշակութային գործիչների կանխամտածված և զանգվածային ոչնչացումը ցեղասպանությունն իրականացնող դահճի կողմից: Նպատակը մեկն է՝ ցեղասպանության իրագործումից առաջ կամ ընթացքում զրկել տվյալ էթնոսին՝ ինքնապաշտպանության կազմակերպումն ստանձնելու կարող ուժից:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի բնորոշմամբ. «Քաղաքական սպանության նպատակն է գլխատել ցեղասպանության ենթակա ազգին և կոտրել նրա դիմադրողական ոգին, որը գործողությունների ազատության լայն դաշտ է ստեղծում ցեղասպանությունը կիրառող պետությունների և կառավարությունների համար՝ զանգվածային սպանդ կազմակերպելու առումով»[1]:

Հայոց ցեղասպանության դեպքում պոլիտիցիդի կամ քաղաքական սպանության մեկնարկը տրվեց 1915 թ. փետրվարին, երբ երիտթուրքական կառավարության հրահանգով բանակ զորակոչվեցին զենք կրելու ունակ շուրջ 60 հազար հայ տղամարդիկ: Դա ձևական զորահավաք էր, քանի որ հայ զինվորներից կազմվեցին բանվորական գումարտակներ, և նրանց ստիպեցին փորել սեփական գերեզմանները: Այդպիսով, հայ բնակչությունը զրկվեց մարտունակ ուժից[2]:

Քաղաքական սպանության հաջորդ փուլը հայ մտավորականների՝ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների զանգվածային բնաջնջումն էր, որի սկիզբը դրվեց 1915 թ. ապրիլի 24-ին:

Հարվածն ուժգին էր հատկապես Կոստանդնուպոլսում, որտեղ բնակվում էր հայ մտավորականության սերուցքը՝ բազմաթիվ գրողներ, արվեստագետներ և գիտնականներ: Հայ ականավոր գործիչների ձերբակալությունները Կոստանդնուպոլսում անձամբ ղեկավարում էր Ստամբուլի ոստիկանապետ Բեդրի բեյը: Նրան աջակցում էին նաև քաղաքական գծով իր տեղակալը՝ Ռեշադը, և ընդհանուր անվտանգության պետ Ջանփոլադը: Ըստ երիտթուրքական իշխանությունների կողմից կանխավ պատրաստված սև ցուցակների՝ հատուկ կնքված ծրարներ էին ուղարկվել ոստիկանական բոլոր տեղամասերը[3]: Հին տոմարով 1915 թ. ապրիլի 11-ին, 12-ին և 13-ին տեղի ունեցան հայ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների բազմաթիվ ձերբակալություններ: Այդ կալանավորումների մասին հետևյալն է պատմում Հայոց ցեղասպանությունը վերապրած մտավորականներից ազգային երեսփոխան Բյուզանդ Բոզաջյանը. «Վերջապէս երբ գրասե-

---

1 Հովհաննիսյան Ն., *Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է*, Երևան, 2012, էջ 122-123:

2 Խրլոպեան Գէորգ Տ., *Ցեղասպանագիտութիւն*, Պէյրութ, 2006, էջ 104:

3 Արզումանյան Մ., *Հայապրան 1914-1917*, Երևան, 1969, էջ 320:

նեակ հասայ, հոն լիուլի տեղեկութիւն առի թէ ո՛ր դասակարգի անձնաւորութիւնք ներբակալուած էին, եւ այն ատեն միայն համոզում գոյացուցի, թէ քաղաքական նշանակութիւն ունեցող դէպք մըն էր այս եւ թէ հայ մատնիչներու կողմէ նախապէս պատրաստուած ցուցակներու վրայ կատարուած էր: Նախասկիզբն էր այս հայ տարագրութեան դժոխային ծրագրին, զոր Իթթիհատական Կուսակցութեան դաւաճան պետերը պատրաստած էին Գերմանիոյ դժոխմբեր խորհրդով»[4]:

Ձերբակալված հայ մտավորականների առաջին խումբը շուրջ 200 հոգի ազատագրկվեց Ստամբուլի կենտրոնական բանտում՝ մեհթերիանեում: Կալանավոր 5 հայ հոգևորականներից ծայրագույն վարդապետ Գրիգորիս Պալաքյանը, ով հրաշքով ողջ է մնացել Եղեռնից, վերհիշում է. *«…ահա բանտին հսկայ երկաթեայ դռներն չարագուշակ ճռինչով մը, կրկին բացուեցան: Խուռներամ ներս հրուեցան բազմաթիւ դէմքեր, ամէնքն ալ ծանօթ յեղափոխական պետեր, հանրային գործիչներ եւ անկուսակցական եւ նոյնիսկ հակակուսակցական մտաւորականներ: Մէկ քանի ժամն անգամ մը, մինչեւ առաւօտ բանտ բերուած նորանոր ներբակալեալներով, գիշերային խոր լռութեանը մէջ, բանտի ամրակուռ եւ բարձր պարիսպներուն ետեւ, տակաւ եռուզեռն կ՚աճէր, քանի բանտարկեալներու բազմութիւնը կը ստուարանար: Իբր թէ նոյն գիշերը՝ բանտին այդ խաւարչտին նկուղներուն մէջ ժամադիր եղած ըլլային, Մայրաքաղաքի հայութեան հանրային աչքառու բոլոր գործիչներն, ժողովական, երեսփոխան, յեղափոխական, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, դեղագործ, ատրամնաբոյժ, վաճառական, սեղանաւոր եւ այլ ամէն դասակարգէ ազգայիններ: Մէկէ աւելի անձեր բերուած էին նոյնիսկ սենեակի զգեստներով եւ հողաթափերով: (…) Ամէնքս ալ հետրամուտ էինք լուծելու այս առեղծուածը եւ պատասխան կը փնտռէինք սա հարցերուն, բայց ինչո՞ւ սա հարիւրաւոր ներբակալութիւնները, եւ արդեօք ի՞նչ պիտի ըլլայ ասոր վախճանը»*[5]:

Քսանչորսժամյա բանտարկությունից հետո՝ 1915 թ. ապրիլի 25-ին, ձերբակալված հայ մտավորականները տարվում են Ստամբուլի Հայդարփաշա երկաթուղային կայարան, որտեղից էլ գնացքներով աքսորվում[6]: Հայ ականավոր գործիչների մի մասը՝ 75 հոգի, ճանապարհին առանձնացվում է և ուղարկվում Այաշ, իսկ մյուս մասը՝ Անկարա: Այաշ աքսորվածներին տեղավորում են քաղաքի ծայրամասում գտնվող «Սարը քըշլա» զորանոցում և սարսափելի կտտանքների ենթարկում[7]: Այաշի աքսորյալների շարքում են եղել հայ մտքի այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ հայտնի դաշնակցական գործիչներ Խաչատուր Մամուլյանը (Ակնունի), Գարեգին Խաժակը, Ռուբեն Զարդարյանը, Սարգիս Մինասյանը, ազգային երեսփոխաններ Հարություն Ջանգյուլյանը, Նազարեթ Տաղավարյանը, Համբարձում Բոյաջյանը (Մեծն Մուրադ), Հարություն Շահրիկյանը, բանաստեղծ Սիամանթոն, դերասան Եսովք Շահենը, վիպագիր Սմբատ Բյուրատը, բժիշկներ

---

4 Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, «Նաւասարդ»-ի հրատարակութիւն, թիւ 4, Բ Տպագրութիւն, Ապրիլ 24, 1985, էջ 116:

5 Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, *Հայ Գողգոթան*, Ա հատոր, Գ տպագրություն, Անթիլիաս, 2003, էջ 107-108:

6 Արզումանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 321:

7 Նույն տեղում:

Խաչիկ Պարտիզակյանը, Կարապետ Փաշայանը, Տիգրան Ալլահվերդին և այլք[8]: Նրանց շարքում գտնվող ազգային երեսփոխան Բյուզանդ Բոզաջյանի խոսքերով. «Այաշի մէջ բանտարկուած էին հայ մտաւորական դասակարգին ամէնէն կարկառուն դէմքերը, զոր կառավարութիւնը «քաղաքական յանցապարտ» տիտղոսով որակած էր»[9]:

Այաշի կալանավորներից հնչակյան գործիչ Համբարձում Բոյաջյանը կառավարության որոշմամբ ուղարկվեց Կեսարիա՝ իբրև թե տեղի ռազմական արտակարգ ատյանում դատվելու համար, սակայն կախաղան բարձրացվեց:

Այաշի աքսորյալները երբեմն խորհրդակցական գաղտնի ժողովներ էին գումարում այստեղ՝ Խաժակի կամ Ակնունու նախագահությամբ: Այդ ժողովներից մեկի ժամանակ կայացված որոշման համաձայն՝ նրանք հեռագրով դիմեցին Ներքին գործերի նախարարություն՝ խնդրելով կա՛մ դատել իրենց, կա՛մ ազատ արձակել, սակայն ապարդյուն[10]: 1915 թ. օգոստոսի կեսերին Անկարայի փոխնահանգապետ Աթըֆի հրամանով Այաշի աքսորյալները սպանվում են՝ քարկոծվելով և սվինահար արվելով: Ուշագրավ է, որ այաշցի տասնապետ Ֆաշիլօղլու Ռեֆիքը չի ցանկացել կրակել հայ երևելիների վրա, սակայն կատաղի կոմիսար Ձեքի Հասանը և չավուշ Հուրշիդը գազանաբար կոտորել են նրանց: Չավուշ Հուրշիդը, Անկարա վերադառնալով, ցինիկաբար պատմել է. «Երբ կոտորածը սկսանք, սպանվողների աղիողորմ ճիչերով, վայնասուններով ձորը և լեռը կթնդար: Ես դոկտոր Փաշայանի աչքերը նախ փորեցի, ապա վիզը կտրեցի և ահավասիկ անոր ոսկի շղթան ու ժամացույցը»[11]:

Տարագրյալ մտավորականների մյուս խումբը (մոտ 150 հոգի) ուղարկվեց Չանքըրը: Այս խմբում էին գտնվում հայ մտավորական սերուցքի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Կոմիտաս վարդապետը, ծայրագույն վարդապետ Գրիգորիս Պալաքյանը, հայ ականավոր բանաստեղծ ու բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը (Ռուբեն Սևակ), բանաստեղծ և դաշնակցական գործիչ Դանիել Վարուժանը, փաստաբան Գասպար Չերազը, «Սաբահ» պարբերականի խմբագիր և Ռամկավար ազատական կուսակցության ղեկավար Տիրան Քելեքյանը, «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քյուչյանը, ուսուցիչ և դաշնակցական գործիչ Արմենակ Բարսեղյանը, «Ոստանի» խմբագիր Միքայել Շամդանջյանը, հրապարակախոս և պատմաբան Արամ Անտոնյանը, ուսուցիչ և դաշնակցական գործիչ Մովսես Պետրոսյանը, հնչակյան գործիչ Սամվել Թոմաջանյանը, դեղագործ և հանրային գործիչ Վահրամ Աստուրյանը, ճարտարապետներ Սիմոն Մելքոնյանը և Մանուկ Բասմաջյանը, օսմանյան բանկի պաշտոնյա Վաղինակ Պարտիզպանյանը և ուրիշներ[12]:

Նրանց մի մասին բաժանեցին երկու քարավանների, որոնցից առաջինում 52 հոգի էին, երկրորդում՝ 24: Այս երկու քարավաններն էլ աքսորվեցին Դեր-Զոր:

---

8 Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, *նշվ. աշխ.*, էջ 118-122:

9 Թէոդիկ, *Յուշարձան Ապրիլ 11-ի*, Belge Yayinlari, 2010, էջ 204-205:

10 Թէոդիկ, *Յուշարձան նահատակ մտաւորականութեան…*, էջ 124:

11 Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 321-322:

12 Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, *նշվ. աշխ.*, էջ 138-143:

Առաջին քարավանից միայն Պարոնյան ազգանունով (անունը չի հիշատակվում – Մ.Ա.) մի հայ բողոքական գրավաճառ ազատվեց աքսորից՝ իր հղած բազմաթիվ դիմումների շնորհիվ, և վերադարձավ Ստամբուլ: Առաջին խմբի մնացած բոլոր անդամներն անգթաբար սպանվեցին Էլբիստանի ճանապարհներին: Իսկ երկրորդ քարավանից փրկվեց միայն Արամ Անտոնյանը, ով հիվանդանոց տեղափոխվեց՝ ճամփին ոտքը կոտրելու պատճառով: Երկրորդ խմբի մյուս բոլոր մտավորականները բերվեցին Էլմա լեռան ստորոտ և սրախողխող արվեցին[13]:

Նրանցից 37 հոգի էին մնացել, այդ թվում՝ Ռուբեն Չիլինկիրյանը (Սևակ), Դանիել Վարուժանն ու Տիրան Քելեքյանը: 37 հոգու ազատ արձակելու և Ստամբուլից բացի իրենց ցանկացած տեղ գնալ թույլատրելու հրաման էր եկել: Այս ցանկ ընդգրկված 5 անձինք արդեն իսկ կա՛մ Պոլիս էին մեկնել, կա՛մ էլ մյուս քարավանների մաս կազմել: Սակայն դրանց փոխարեն արձակման ենթակա անձանց ցանկում բացակայում էին 5 մտավորականների անուններ, որոնց մեջ էին նաև Վարուժանն ու Սևակը: Վերջիններս հեռագրով դիմեցին Ստամբուլ՝ Ներքին գործերի նախարարություն, որպեսզի իրենց ևս այդ ցանկ ընդգրկեն:

Սակայն Չանքըրրի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի գործադրած ջանքերով որոշվեց, որ այդ հինգը տեղափոխվեն Այաշ: Կարծես ճակատագրի չար քմահաճույքով նրանց մեկնելուց ընդամենը մեկ օր հետո Ստամբուլից հեռագրի պատասխանը եկավ, որ այդ հինգը ևս, մյուս 22-ի նման, ազատվեն աքսորից[14]:

Այս հինգը գազանաբար սպանվեցին 1915 թ. օգոստոսի 13-ին Թունեյ գյուղի ձորակում: Նրանց վրա հարձակվեցին դաշույններով զինված քրդերը՝ ավազակ Հալոյի գլխավորությամբ, հայ աքսորյալներին իջեցրին ձորը և սրախողխող արեցին: Ուշագրավ է, որ մինչ այդ հայ ականավոր բանաստեղծ ու բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը (Սևակը) մահից փրկել էր քուրդ Հալոյի աղջկան: Քուրդ ավազակը հայ բժշկին առաջարկել էր մահմեդականություն ընդունել և իր դստերը կնության առնել՝ անխուսափելի մահից ազատվելու համար, սակայն կտրուկ մերժում էր ստացել[15]:

37 հոգուն ազատ արձակելու մասին հիշյալ որոշումը ևս զուտ ձևական բնույթ էր կրում, քանի որ իրականում նրանք կաշկանդված էին հազար ու մի արգելքներով և շարունակում էին հալածանքների ենթարկվել: Նրանց մեծ մասն սպանվեց փոխադրության անվան տակ: Սպանվածների մեջ էր նաև Տիրան Քելեքյանը, ով 30 տարի շարունակ պատմություն էր դասավանդել օսմանյան համալսարանում, խմբագրել «Սաբահ» օրաթերթը, կազմել ֆրանս-թուրքերեն բառարան: Նրան սպանեցին Սեբաստիայում՝ Ալիս գետի կամրջի մոտ[16]:

Հարկ է նշել նաև, որ Չանքըրրի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզը հետագայում՝ 1919-1920 թվականնե-

---

13 Թէոդիկ, *Յուշարձան Ապրիլ 11-ի…*, էջ 227:

14 Թէոդիկ, *Յուշարձան նահատակ մտաւորականութեան…*, էջ 137:

15 Արզումանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 323-324:

16 *Նույն տեղում*, էջ 325:

ին, դատվել է Օսմանյան կայսրության Ռազմական արտակարգ ատյանի կողմից՝ Ստամբուլից Չանքըրը աքսորված հայերի սպանության մեղադրանքով[17]: Նրա գործը նախ քննվել է Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարության շրջանակներում: Ամբաստանյալ Ջեմալ Օղուզը 1919 թ. դեկտեմբերի ու 1920 թ. հունվարի դատական նիստերի ընթացքում ձևացրել է, թե խելագարվել է, անընդհատ վիճաբանել է դատարանի նախագահի հետ և մինչև իսկ ինքնասպանության փորձ արել: Ի վերջո, նա կարողացել է համոզել դատարանի կազմին, որ իրեն հոգեբուժարան ուղարկեն: Թեև սկզբում ատյանը մերժել է նրա դիմումը, սակայն տասներորդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) նրա դատական գործն «առողջական խնդիրների» պատրվակով առանձնացվել է[18] պատասխանատու քարտուղարների դատական գործընթացից: Ջեմալ Օղուզի առանձին դատաքննությունը վերսկսվել է 1920 թ. հունվարի 27-ին: 1920 թ. փետրվարի 3-ի նիստում մեղադրյալի դեմ վկայություն է տվել հայ փաստաբան Գասպար Չերազը, ով դատարանին հայտնել է, թե ինքը Չանքըրը աքսորված լինելու պատճառով քաջատեղյակ է Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի սպանության մանրամասներին: Ըստ վկայի՝ Ջեմալ Օղուզն ինքն էր ուղարկել հայ մեծանուն բանաստեղծներին՝ այդպիսով կազմակերպելով նրանց սպանությունը: Գասպար Չերազը վկայություն է տվել՝ բոլոր փաստերի մասին դատարանին հայտնելով ճշգրիտ թվականներ և անուններ[19]: Հաջորդ նիստում, որը կայացել է 1920 թ. փետրվարի 5-ին, Ջեմալ Օղուզի դեմ ուղղված վկայությամբ է հանդես եկել Միքայել Շամդանջյանը, ով հաստատել է, թե հայ աքսորյալների երկու խմբերի ցանկերը (24 և 52-հոգանոց) կազմվել էին Չանքըրըում Ջեմալ Օղուզի կողմից, ով ավելի զորավոր էր, քան Չանքըրըի մութասարիֆ (սանջակի/մարզի կառավարիչ) Ասաֆ բեյը[20]: Ջեմալ Օղուզը 1920 թ. մայիսին դատաքննվել է հարյուրապետ Նուրեդդինի հետ միասին: 1920 թ. մայիսի 27-ին նրան դուրս են գրել հիվանդանոցից և վերստին բերել կենտրոնական բանտ, քանի որ դատարանը նրան դատապարտել էր 5 տարի և 4 ամիս ազատազրկման, ապա Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարության պահանջով 1920 թ. օգոստոսի 2-ին նա հանձնվել է անգլիացիներին,

---

[17] Ջեմալ Օղուզը հայ մեծանուն բանաստեղծներ Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի, ինչպես նաև՝ Օննիկ Մաղազաջյանի, Դյոքմեջի Վահանի և հացավաճառ Արթին աղայի սպանության կազմակերպիչն էր: Ջեմալ Օղուզը մաս առ մաս տեղահանել էր Ստամբուլից Չանքըրը աքսորված հայերին և նրանց հանձնել Անկարայի նահանգապետ Աթըֆին: Նրան Քասթամոնուի իր պաշտոնակցի հետ հաջողվել էր պաշտոնանկ անել Քասթամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշային և բեկանել այստեղի հայերին տեղահանությունից զերծ պահելու կուսակալի որոշումը: «Ճակատամարտ» օրաթերթի բնորոշմամբ Ջեմալ Օղուզը «Իթթիհատի հին մէկ բարակն էր» (որսաշունը), ով որպես ծածկագրության պաշտոնյա՝ ներկա էր գտնվել նաև Ադանայի 1909 թ. ջարդին (տե՛ս «Դանիէլ Վարուժանի եւ Ռ. Սեւակի սպաննիչը ձերբակալուած», *«Ճակատամարտ»*, 5 ապրիլ, 1919, N 122 (1943):

[18] Տե՛ս Dadrian V., Akçam T., *"Tehcir ve Taktil", Divan-i Harb-i Örfî Zabitlari, İttihad ve Terakki'nin Yargilanmasi 1919-1922,* İstanbul: Bilgi Üniversitesi Yayinlari, 2008, էջ 155:

[19] «Ո՞վ սպաննեց երկու բանաստեղծները», *«Ճակատամարտ»,* 4 փետրվար, 1920:

[20] «Ճէմալ Օկուզի դատը», *«Ճակատամարտ»,* 6 փետրվար, 1920, N 373 (2194):

ովքեր 1920 թ. սեպտեմբերի 30-ին հայերի կոտորածների մեջ մեղադրվող մի շարք այլ թուրք պաշտոնյաների հետ նրան էլ են աքսորել Մալթա[21]:

Ձանգվածաբար ձերբակալվեցին, աքսորվեցին և կոտորվեցին ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլ նաև գավառների հայ մտավորականները՝ բազմաթիվ գրողներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ (մոտ 800 հոգի): Նրանց մեջ էին Երուխանը, Թլկատինցին և ուրիշներ[22]:

Ցանկանում ենք առանձնահատուկ անդրադառնալ նաև օսմանյան խորհրդարանի անդամներից՝ ականավոր գրող, իրավաբան և հրապարակախոս Գրիգոր Ձոհրապի և դաշնակցական գործիչ Վարդգես Սերենգուլյանի եղերական վախճանին: Նրանք մեղադրվում էին «պետական հանցագործության» մեջ և պետք է ներկայանային Դիարբեքիրի ռազմական արտակարգ ատյանին: Նրանց Ադանայի և Հալեպի վրայով տարան Ուրֆա, ապա տեղափոխեցին այստեղից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Քարաքյոփրյու վայրը, որտեղ արդեն պատրաստ կանգնած էին զինված ավազակախմբերը՝ Չերքեզ Ահմեդի գլխավորությամբ, ով սպանեց նրանց՝ անասելի տանջանքների ենթարկելով[23]:

Այստեղ տեղին է մեջբերել այդ ժամանակաշրջանի թուրք գրող Ահմեդ Ռեֆիք Ալթընայի հուշերը՝ Գրիգոր Ձոհրապի և Վարդգես Սերենգյուլյանի մարդասպանների վերաբերյալ. «Երբ Չերքեզ Ահմեդին բերող գնացքը ժամանել էր, ամեն կողմ ռազմական կարգապահության տակ էր առնվել: Ահմեդն իրականում Աֆիոնում էր ձերբակալվել և Էսքիշեհիր էր տարվում ոստիկանների ուղեկցությամբ: Գնացքից բարձրահասակ, մորթե գլխարկով, երիտթուրք պատվիրակների և նահանգապետերի ճամփորդական հագուստով, թավ մորուքով, նիհար դեմքով մեկը դուրս եկավ: Նրա հետևից միջահասակ և թխադեմ մեկն էլ էր գալիս՝ թավշե շալվարով: Բարձրահասակը Չերքեզ Ահմեդն էր, մյուսը՝ լեյտենանտ Հալիլը: Նրանք Հատուկ կազմակերպության միջոցով ուղարկված ավազակախմբերի ղեկավարներից էին: Հատկապես Հալիլի վաստակն ավելի մեծ էր: (…) Չերքեզ Ահմեդը հայկական ողբերգությունը հաստատող կարևոր փաստ էր: Այդ արյունալի դեպքի դրվագների մասին ցանկացա անձամբ գործած անձից լսել: Չերքեզ Ահմեդին հարցրի, թե ինչեր է արել արևելյան վիլայեթներում: «Եղբա՛յր,-ասաց,-այս վիճակը պատվիս դիպչում է: Ես ծառայել եմ այս հայրենիքին: Գնացեք և տեսեք՝ Վանը և շրջակայքը Կաաբայի եմ վերածել: Այսօր այնտեղ չեք կարող գեթ մի հայի հանդիպել: Ես այդքան ծառայեցի հայրենիքիս, իսկ հետո Թալեաթի պես սրիկաները պիտի Ստամբուլում սառը գարեջուր վայելեն, իսկ ինձ ոստիկանների ուղեկցությամբ այստե՞ղ բերեն: Չէ՛, դա վիրավորում է արժանապատվությունս»: (…) Ուզում էի Չերքեզ Ահմեդից ավելի շատ տեղեկություններ ստանալ: «Լա՛վ, իսկ Ձոհրապին և մյուսներին ի՞նչ պատահեց»,– հարցրի ես: «Վա՛յ, չե՞ք լսել: Բոլորին էլ սատկացրել եմ»,-ասաց նա: Ծխախոտի ծուխը դեպի օդ մղելով՝ խոսքը շարունակեց՝ ձախ

---

21 Տե՛ս Dadrian V., Akçam T., *նշվ. աշխ.*, էջ 88:

22 Արզումանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 326:

23 Նույն տեղում, էջ 324-325:

ձեռքով բեղերը շտկելով. «Հալեպից դուրս էին եկել: Ճանապարհին հանդիպեցինք: Անմիջապես շուրջկալի մեջ առա նրանց ավտոմեքենան: Հասկացան, որ սատկելու են: Վարդգեսը ասաց. «Շա՛տ լավ, Ահմե՛դ բեյ, մեզ հետ այդպես եք վարվում, իսկ արաբների՞ն ինչ եք անելու: Նրանք էլ գոհ չեն ձեզանից»: «Դա քո գործը չէ, լակո՛տ»,-ասացի նրան և մաուզերի փամփուշտով ուղեղը ջնջխեցի: Հետո Ջոհրապի օձիքից բռնեցի: Ոտքերիս տակ առա և գլուխը ճմլեցի[24]»:

Ամփոփելով նշենք, որ Մեծ եղեռնի ժամանակ նահատակված հայ ականավոր գործիչներից շատերը, ականատեսների վկայությամբ, մահից առաջ ափսոսանք են հայտնել՝ իրենց մշակութային գործունեությամբ նաև թուրքերին ծառայելու համար: Եթե ընկալելի է նախքան Ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մշակույթը զարգացրած արևմտահայ մտավորականության դյուրահավատությունը, ապա լրիվ անհասկանալի են թվում այն հայ գիտնականներն ու արվեստի գործիչները, ովքեր վերստին մեծ ներդրում ունեցան Թուրքիայի Հանրապետության գիտության և մշակույթի մեջ: Իսկ նմանների թիվը զարմանալիորեն, փոքր չէ:

Հարկ է նաև շեշտել, որ պոլսահայության հանդեպ քաղաքական սպանության կամ պոլիտիցիդի երևույթը նկատելի է անգամ մերօրյա Թուրքիայում: Թե՛ «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը 2007 թ. հունվարի 19-ին, թե՛ թուրքական բանակում հայազգի Սևակ Շահին Բալըքչըի՝ ծառայության ընթացքում իրականացված դիտավորյալ սպանությունը 2011 թ. ապրիլի 24-ին՝ այդ խորհրդանշական օրը, և թե՛ պոլսահայ լեզվաբան Սևան Նշանյանի ազատազրկումը ևս պետք է դիտարկել որպես պոլիտիցիդի կամ քաղաքական սպանության մասնավոր դեպքեր:

Հայոց ցեղասպանության ժամանակ կիրառված պոլիտիցիդի հիմնական հետևանքը եղավ ոչ միայն Մեծ եղեռնի ընթացքում և դրանից անմիջապես հետո արևմտահայության գլխատումը, այլ նաև՝ հետագա տասնամյակներին Թուրքիայի Հանրապետության քաղաքացի հայության, հատկապես պոլսահայության ապաքաղաքականացումը: Հիրավի, վերջին հարյուրամյակում, չնայած պոլսահայ համայնքի ոչ սակավ թվին, Թուրքիայի հայերի կողմից չի հիմնվել որևէ քաղաքական կուսակցություն: Միայն վերջին տարիներին, պայմանավորված Թուրքիայի՝ ԵՄ-ի անդամակցության գործընթացով, ստեղծվել են մի քանի հայկական հայրենակցական միություններ, որոնց գործունեությունը, սակայն, անհնար է բնորոշել որպես քաղաքական:

Վերջապես, անհնար է անգամ պատկերացնել, թե հայկական և համաշխարհային մշակույթի մեջ դեռ որքան մեծ ներդրում կունենային Հայոց ցեղասպանության ժամանակ Կոմիտասի նման հոգեցնցում ապրած կամ նահատակված հայ արվեստի և մշակույթի գործիչներից շատերը, եթե նրանց ապրելու և արարելու հնարավորություն տրվեր:

---

[24] Ahmet Refik Altinay, *İki Komite, İki Kital, Bedir Yayinevi, İstanbul, 1999, ss. 49-52.*

ՊՈԼԻՏԻՑԻԴԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մելինե Անումյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության դեպքում պոլիտիցիդի մեկնարկը տրվեց 1915 թ. ապրիլի 24–ին, երբ սկսվեց հայ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների զանգվածային բնաջնջումը: Հայ գործիչները մեծ ներդրում են ունեցել Թուրքիայի գիտության և մշակույթի մեջ: Հայոց ցեղասպանության ընթացքում զոհված նշանավոր հայ գործիչներից շատերը նախքան մահն ափսոսանք էին հայտնում թուրքերին իրենց մատուցած ծառայությունների համար:

Կոստանդնուպոլսի (Ստամբուլի) հայերի նկատմամբ պոլիտիցիդը շարունակվում է նաև ժամանակակից Թուրքիայում: Ինչպես «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությունը 2007 թ. հունվարի 19–ին, այնպես էլ հայ լեզվաբան Սևան Նշանյանի բանտարկությունն անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքական հաշվեհարդարի մասնավոր դեպքեր:

Հայոց ցեղասպանության ընթացքում թուրքական իշխանությունների կողմից գործի դրված պոլիտիցիդի հիմնական արդյունքը դարձավ Թուրքիայի քաղաքացի հայերի հիմնական զանգվածի ապաքաղաքականացումը:

Բանալի բառեր՝ պոլիտիցիդ, հայ մտավորականություն, Հայոց ցեղասպանություն:

THE POLITICIDE IN THE CONTEXT OF THE ARMENIAN GENOCIDE

Meline Anumyan

SUMMARY

In the case of the Armenian Genocide, the start of the Politicide was given on April 24, 1915, when the Armenian political, public, and cultural figures' mass annihilation had begun.

Armenian scholars and cultural figures have greatly contributed to science and culture in Turkey. Before their death, many of the influential figures who died during the Armenian Genocide expressed regret for having served the Turks.

The Politicide toward the Istanbul Armenians is noticeable in modern-day Turkey, too. The murder of Hrant Dink, the chief editor of Agos, who was killed on January 19, 2007, as well as Armenian linguist Sevan Nisanyan's arrest should be observed as particular cases of political killing.

The primary consequence of the Turkish leadership's politicide (political killing) at the time of the Armenian Genocide was the depolitization of the Armenian citizens of Turkey.

Keywords: politicide, Armenian intelligentsia, Armenian genocide.

ПОЛИТИЦИД В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДА АРМЯН

Мелине Анумян

РЕЗЮМЕ

В Геноциде армян старт политициду был дан 24 апреля 1915 года, когда началось массовое уничтожение армянских политических, общественных и культурных деятелей. Армянские ученые и деятели искусств внесли большой вклад в науку и культуру Турции. Многие из погибших в ходе Геноцида армян влиятельных армянских деятелей перед смертью выражали сожаление в том, что служили туркам.

Явление политицида в отношении армян Константинополя заметно также в современной Турции. Как убийство главного редактора газеты «Акос» 19 января 2007 г., так и заключение в тюрьму армянского лингвиста Севана Ншаняна необходимо рассматривать в качестве частных случаев политического насилия.

Основным следствием политицида, примененного турецким руководством во время Геноцида армян, была деполитизация армян-граждан Турции.

Ключевые слова: политицид, армянская интеллигенция, Геноцид армян.